ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

30 ՀՈՒՆՎԱՐԻ
2015թ.

ԹԻՎ 201

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն Ի Ն

Էլեկտրոնային տարբերակով Ձեզ է ուղարկվում Աշտարակ քաղաքային համայնքի ավագանու կողմից 2015թ. հունվարի 26-ին ընդունված որոշումները /արձ. 26/:

Առդիր՝ 12 էջ:

X

Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

Կատարող՝
Գ. Դատումյան
/0232/3-52-02

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26-ը հունվարի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

N 1-Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/3 և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 35/2 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

- Հաստատել Աշտարակ համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ըստ ստորև բերված վերլուծության.

	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	Ընդ.
Եկամտային մաս	442928.2	40368.8	483297
Ծախսային մաս	400546.7	61985.7	462532.4

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 9 *ԴԵՄ – 1* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ	
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ	
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՄԵՆ	ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	
	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ	

Չի մասնակցել Կարո Գասպարյանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26-ը հունվարի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ն 2-Ն ՈՐՈՇՈՒՄ

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով «2015թ-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու», ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/3 և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34/4 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման,համաձայն հատված 3-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանասավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև. /հազար դրամ/

	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	Ընդ.
Եկամտային մաս	445190.1	22500,0	445190.1
Ծախսային մաս	445190.1	66775.9	489466.0
Դեֆիցիտ	------	-44275.9	-44275.9
Պահուստային ֆոնդ	22500,0		

ԱՎԱԳԱՆԻ՝

ԿՈՂՄ - 8 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

Չեն մասնակցել Կարո Գասպարյանը, Սարիբեկ Օվոյանը, Ստյոպա Քասյանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26-ը հունվարի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2014Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ն 3-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/29 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակի քաղաքապետ Ա. Անտոնյանի 18.11.2014թ. թիվ 215-Ա կարգադրությունը և գույքագրման հանձնաժողովի արձանագրությունը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Աշտարակի համայնքային սեփականության 2014թ. գույքագրման փաստաթղթերը /հիմքերը գտնվում են ֆինանսատնտեսագիտական բաժնում/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՄԵՆ	ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

Չի մասնակցել Կարո Գասպարյանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26-ը հունվարի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/

Ն 4-Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածի, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆԻ՝

ԿՈՂՄ - 9 *ԴԵՄ – 1* *ՉԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ	
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ	
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	
	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ	

Չի մասնակցել Կարո Գասպարյանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

Հավելված 1
Հաստատված է համայնքի ավագանու
26.01.2015թ. N 4-Ն որոշմամբ

Հողերի աճուրդ-վաճառք

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/	Սահմանափակումներ
1	հողատարածք	Տ. Մեծի 31 շենքի հարևանությամբ	843-008-ից	20	բնակ.		բնակելի	65	
2	հողատարածք	Տ. Մեծի 31 շենքի հարևանությամբ	843-008-ից	20	բնակ.		բնակելի	65	
3	հողատարածք	Տ. Մեծի փողոց /գերեզմանների հարևանությամբ/	135-004-ից	360	բնակ.		հասարակական	65	
4	հողատարածք	Մուղնի	319-002-ից	397.5	բնակ.		բնակելի	65	
5	հողատարածք	Պ.Պռոշյան 9 շենքի հարևան.	177-027-ից	66.8	բնակ.		բնակելի	65	
6	հողատարածք	Տ. Մեծի 29 շենքի հարևանությամբ	130-001-ից	30	բնակ.		բնակելի	65	
7	հողատարածք /ուղղակի վաճառքով օտարել Գագիկ Հովեյանին/	Աշտարակ տեղամաս	577-020	434	գյուղ.	այլ		100	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն**

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26-ը հունվարի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/

Ն 6-Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1],76-80 հոդվածների, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Քասախի կիրճում գտնվող հատուկ պահպանվող հողերից կառուցապատման իրավունքով /մրցույթ/ տրամադրելու և հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին՝ համաձայն հավելված 3-ի:
2. Կառուցապատման իրավունքով Վոլոդյա Գրիգորյանին Ա. Մանուկյան փողոցի հմ. 1 շենքի հարևանությամբ 20քմ հողատարածք տրամադրելու 30 տարի ժամկետով՝ տարեկան 50000 ՀՀ դրամ վճարով, ավտոտնակ կառուցելու համար:
3. Կառուցապատման իրավունքով Վահե Մովսիսյանին Ն. Աշտարակեցու փողոցում /գերեզմանոցի պարսպին կից/ 20քմ հողատարածք տրամադրելու 15 տարի ժամկետով՝ տարեկան 50000 ՀՀ դրամ վճարով, առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 9 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	

Չեն մասնակցել Սարիբեկ Օվոյանը, Մուշեղ Տաշչյանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

Հավելված 3
Հաստատված է համայնքի ավագանու
26.01.2015թ. N 6-Ն որոշմամբ

Հողերի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթ

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Գործառնական նշանակությունը	Սեկնարկային գին՝ որպես տարեկան արժեքի /կադաստրային արժեքի %/	Սահմանափակումներ
1	հողատարածք	Քասախի կիրճ	859-250-ից	1600	Հատուկ պահպանվող տարածքներ		Հանգստի գոտի	100	
2	հողատարածք	Քասախի կիրճ	736-007-ից	1800	Հատուկ պահպանվող տարածքներ		Հանգստի գոտի	100	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն**

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26-ը հունվարի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015Թ-ՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ SMS ՄԻԿՐՈՀԱՐՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ն 7-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի, 16-րդ հոդվածի կետ 33-ի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ավագանու 20.09.2013թ-ի 10-Ն որոշմամբ հաստատված <Տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության կարգի> 4.2.3 կետը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակի քաղաքապետարանի կողմից 2015 թվականին ներքոհիշյալ աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների առաջնահերթությունը որոշելու նպատակով կազմակերպել sms միկրոհարցում:
2. Հարցումը կազմակերպել կից հավելվածով ներկայացված հարցերի հերթականությամբ:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 9 *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	

Չեն մասնակցել Սարիբեկ Օվոյանը, Մուշեղ Տաշչյանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

Հավելված

Հաստատված է համայնքի
ավագանու 26.01.2015թ. N 7-Ա որոշմամբ

SMS ՄԻԿՐՈՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1 Պուրակներում, մարդաշատ վայրերում նստարանների տեղադրում

2 Փողոցներում փոքր աղբարկղերի տեղադրում

3 Մանկապարտեզների համար մահճակալների և այլ գույքի ձեռք բերում

4 Նարեկացի-Մաշտոց փողոցների խաչմերուկում լուսաֆորի տեղադրում

5 Կենտրոնական փողոցների ասֆալտապատում, նշագծում

6 Աջ և ձախ ափերում խաղահրապարակների կառուցում

7 Մայր առվի ցանկապատում

8 Լուսավորության ցանցի ընդլայնում /նաև շենքերի բակեր/

9 Քաղաքի մուտքերի ձևավորում

10 Կենտրոնական փողոցների մայթերի սալիկապատում

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26-ը հունվարի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ <ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ> /ՏԿՏ/ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ն 8-Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ քաղաքի <Տարածքային կառավարման տեղամասերի> /ՏԿՏ/ կանոնադրությունը՝ առաջարկվող փոփոխություններով և լրացումներով /2.4 կետի և 4.1 կետի առաջին պարբերությունը /ընդգծված//:
   /կցվում է/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 8 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՄԵՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

Չեն մասնակցել Սարիբեկ Օվոյանը, Կարո Գասպարյանը, Ստյոպա Քասյանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/Փոփոխված և հաստատված 26.01.2015թ. հմ.8-Ն որոշմամբ/

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ /ՏԿՏ/

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Տարածքային կառավարման տեղամասերը ստեղծվում են քաղաքապետի որոշմամբ, համայնքի տվյալ տարածքի կառավարման, բնակելի տների շահագործման և պահպանման, բնակչության կոմունալ-բարեկարգման և սոցիալ-տնտեսական աշխատանքների կազմակերպմանն աջակցելու նպատակով:

1.2. Տեղամասի տարածքը որոշվում է քաղաքապետարանի կողմից:

1.3. Տեղամասերի պետերը հաշվետու են քաղաքապետարանի առջև:

1.4. Տեղամասը չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

1.5. Տեղամասն ունի կնիք և շտամպ /անկյունային դրոշմ/:

1.6. Սույն կանոնադրության մեջ լրացումներն ու փոփոխությունները կատարվում են քաղաքապետարանի կողմից:

2. ՏԿՏ-ՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Տեղամասերը հրավիրում են տարածքի բնակիչների հավաքներ՝ իրենց առջև դրված խնդիրների պարզաբանման և հարցերի լուծման համար, ինչպես նաև իրենց գործունեության շրջանակի մեջ մտած հարցերի վերաբերյալ միջնորդություններ և առաջարկություններ են ներկայացնում քաղաքապետարանի աշխատակազմին:

2.2. Տարածքի բնակիչներին տալիս են տեղեկանքներ՝ նրանց բնակության վայրի, ընտանիքի կազմի վերաբերյալ, վավերացնում են թերթիկներ՝ գրանցման և դուրս գրման, անձնագիր ստանալու կամ փոխելու համար և այլն:

2.3. Մասնակցում և կազմակերպում են իրենց կողմից սպասարկվող տարածքի բարեկարգման, կառուցապատման և պահպանման աշխատանքներին, հսկողություն սահմանում դրանց որակով և ժամանակին կատարման վրա:

2.4. կազմակերպում, աջակցում և իրականացնում են օրենքով սահմանված տեղական հարկերն ու վճարները ժամանակին գանձելու աշխատանքները.

2.5. Տեղամասի առանձին բնակիչների կողմից համակեցության կանոնները, հասարակական կարգ ու կանոնը խախտելու, ապօրինություններ թույլ տալու դեպքում այդ մասին գրավոր հայտնում են քաղաքապետարանի աշխատակազմին, համապատասխան պետական, սանիտարական, հրշեջ, իրավապահ մարմիններին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

2.6. Կատարում են տարածքի բնակչության հաշվառում, կազմակերպում բնակչության ընդունելություն, ինչպես նաև, օրենքով սահմանված կարգով, ընթացք տալիս նրանց բանավոր և գրավոր դիմում-բողոքներին և առաջարկություններին:

2.7. Ապահովում են բնակչության ակտիվ մասնակցությունը մասնակի բարեկարգման, կոմունալ տնտեսության պահպանման և դրանց ճիշտ օգտագործման, սանիտարական միջոցառումների կազմակերպման գործին:

Այս նպատակով.

- աջակցում են իրենց տարածքում ՀՀ օրենսդրության պահանջների կատարմանը.

- կազմակերպում են տարածքի բնակիչների մասնակցությունը տների, բակերի, փողոցների և դրանց հարող տարածքների բարեկարգման, կանաչապատման, դրանք խնամելու և պահպանելու, ոռոգման ցանցը մաքրելու աշխատանքներին.
- հետևում և աջակցում են ընդհանուր օգտագործման ծորակների, ոռոգման ցանցի, գազամատակարարման, հոսանքի, կապի միջոցների և այլ կոմունալ օբյեկտների պահպանմանը.
- բնակիչներին ներգրավում են մասսայական սանիտարական մաքրման և հասարակական հիմունքներով կատարվող այլ աշխատանքներում, անհրաժեշտության դեպքում կազմակերպում են բնակչության մասնակցությունը տարերային աղետների հետևանքների վերացման գործին.

ԸՍՏ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ.

- աջակցում են առողջապահության մարմիններին՝ բնակչության մեջ բուժ-պրոֆիլակտիկ միջոցառումների անցկացման գործում.
- հետևում են քաղաքացիների կողմից անձնագրային ռեժիմի պահպանմանը, աջակցում են քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործին.
- կազմակերպում են բնակչության հանդիպումները Ազգային ժողովի պատգամավորների, ավագանու անդամների և սպասարկող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ.
- աջակցում են զինվորական կոմիսարիատին հաշվառման աշխատանքների կատարման և զորահավաքային միջոցառումների իրականացման աշխատանքներում՝ համագործակցելով աշխատակազմի զորահավաքային մասնագետի հետ.
- իրականացնում են գյուղ. տեխնիկայի և անասնագլխաքանակի հաշվառում:

3. ՏԿՏ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Տեղամասերի պետերն աշխատում են քաղաքապետարանի հետ համագործակցված և նրա հետ համաձայնեցված ու հաստատված ծրագրերով:

3.2. Տեղամասերի պետերը բնակիչների ընդհանուր հավաքներ են անցկացնում իրենց գործունեության շրջանակի մեջ մտնող հարցերի շուրջ:

3.3. Տեղամասերի պետերը չեն կարող հրամաններ արձակել, կարգադրություններ անել, տույժեր, տուգանքներ նշանակել, առուծախի գործարքների մասնակցել, փաստաթղթերի պատճեններ վավերացնել:

3.4. Բնակիչների ընդհանուր հավաքներ կարող են անցկացվել ինչպես ամբողջ տարածքի, այնպես էլ ըստ նրա առանձին մասերի՝ փողոցների, փակուղիների, բակերի և այլն:

4. ՏԿՏ-ՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Տեղամասերի գործունեությունը ղեկավարվում է քաղաքապետարանի կողմից և դրանց լուծարումը կատարվում է գործող կարգին համապատասխան՝ քաղաքապետի առաջարկությամբ:

- <u>տեղամասերի պետերին նշանակում և ազատում է քաղաքապետը.</u>
- տեղամասի աշխատանքը ղեկավարում է նրա պետը, որը պատասխանատվություն է կրում աշխատանքների պատշաճ կատարման համար.
- քաղաքապետարանը քննարկում է տեղամասերից ստացված առաջարկությունները և դրանց առթիվ ընդունում է համապատասխան որոշումներ ու կարգադրություններ.
- քաղաքապետարանը տեղամասերի պետերի հետ անց է կացնում սեմինար-խորհրդակցություններ, նրանց ծանոթացնում նախանշված ծրագրերին և այդ ուղղությամբ ՏԿՏ-ների անելիքներին: